ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

5 դեկտեմբերի 2025 թվական

ԿԱՆՈՆՆԵՐ

ՈՒՍԱՆՈՂԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

(ՓՈՓՈԽՎԱԾ)

ՀՐԱԶԴԱՆ 2025

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Ուսանողների կարգապահական կանոնները կանոնակարգում են վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգապահական կանոնները խախտելու հետ կապված գործողությունները:

1.2.Սույն կանոնների համար հիմք են հանդիսանում քոլեջի կանոնադրությունը, ուսանողի հետ կնքած պայմանագիրը և լիազոր մարմնի կողմից տրված հրամանները, որոշումները:

2.ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Քոլեջի ուսանողը իրավունք ունի՝

1) ընտրել տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում է Քոլեջը,

2) մասնակցել Քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով Խորհրդի կազմում, մասնակցել ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին,

3) մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները,

4) ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,

5) վճարովի հիմունքով ստանալու երկրորդ մասնագիտություն կամ օգտվելու լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից,

6) սահմանված կարգով վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ և հակառակը,

7) սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ

8) անվճար օգտվել քոլեջի գրադարանից, ուսումնական, գիտական, բուժական և այլ

ստորաբաժանումների ծառայություններից,

9) մասնակցել Քոլեջի հետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը,

10) ստանալ ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ուսանողական նպաստ և կրթաթոշակ:

2.2. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող ուսանողները ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվում են ուսուցման նույն համակարգում:

2.3. Քոլեջի ուսանողը և դիմորդն իրավունք ունի ծանոթանալ Քոլեջի լիցենզիային և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին /առկայության դեպքում/:

2.4. Քոլեջի ուսանողը պարտավոր է՝

1) կատարել Քոլեջի կանոնադրության իրեն վերաբերող պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները,

2)պարտադիր հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները,

3)խնամքով վերաբերվել Քոլեջի գույքին՝ վնաս պատճառելու դեպքում հատուցել նյութական վնասը,

4)հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը,

5)վճարովի հիմունքներով սովորելիս սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը,

6) կատարել կրթական ծրագրերի պահանջները,

7)հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին,

8) բարձր պահել Քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը,

9) պահպանել հասարակության բարոյական նորմերը,

10)անկախ ուսումնառության ընդհատման պատճառից՝ մարել ուսման վարձի և/կամ գրադարանի պարտքը,

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ՝

- *քոլեջում հաշվառված, սակայն վեց աշխատանքային օր անընդմեջ կամ ամսվա մեջ ավելի քան 10 օր չհաճախած (չհաճախող) ուսանողների վերաբերյալ տվյալները ուսումնական հաստատությունը մեկօրյա ժամկետում քոլեջների համար ստեղծված կառավարման էլեկտրոնային ենթահամակարգում կատարում է համապատասխան գրառում (ստեղծում է հայտ)՝ նշելով չհաճախելու պատճառը: Պատճառը բացահայտել չկարողանալու դեպքում կատարվում է «պատճառը չի բացահայտվել» գրառում: Տեղեկատվությունը հասանելի է ոստիկանությանն ու սոցիալական աջակցության մարմիններին: «Սովորողի հիվանդությունը» որպես պատճառ նշելու դեպքում հայտում լրացվում է նաև հիվանդությունը ախտորոշած բժշկական հաստատության անվանումը, և հայտը տեսանելի է դառնում սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին և այդ բժշկական հաստատությանը: Եթե հիվանդությունը ախտորոշած բժշկական հաստատության անվանումը հայտնի չէ ուսումնական հաստատությանը, ապա հայտի տվյալ դաշտում նշվում է այն պոլիկլինիկան, որտեղ հաշվառված է երեխան:*
- *Եթե բացակայության պատճառը հնարավոր չէ ճշտել, կամ այնպիսին է, որ ուսումնական հաստատության ռեսուրսները բավարար չեն այն վերացնելու, և կարող է հանգեցնել սովորողի ուսումնական հաստատությունից դուրս մնալուն, ապա ուսումնական հաստատությունը, երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգում գրառում կատարելու միջոցով, այդ մասին տեղյակ է պահում սովորողի բնակության վայրի ԽՀՄին, սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը և ոստիկանությանը՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշմամբ սահմանված կարգով սոցիալական դեպք վարելու համար և ապահովելու սովորողի ուսումնական հաստատություն հաճախելը:*

- Սովորողի՝ հաստատություն հաճախելը վերսկսելուց հետո հայտը ստեղծող մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում փակում է տվյալ հայտը և արխիվացնում:

Ուսումնական հաստատություն հաճախելու, սակայն ծնողի դիմումի հետևանքով ուսումը կիսատ թողնելու դեպքում՝

1) ուսումնական հաստատության տնօրենը ծնողի դիմումի հիման վրա սովորողին հանում է հաշվառումից, եթե դիմումում հստակ նշված է տեղափոխման վայրը, առկա է տվյալ ուսումնական հաստատությունից սովորողին ընդունելու վերաբերյալ համաձայնություն: Եթե սովորողը ծնողի դիմումի հիման վրա դուրս է եկել ուսումնական հաստատության հաշվառումից և դիմումում նշված հաստատությունում չի հաշվառվել այն հաստատությունը, որտեղ պետք է տեղափոխվի նա, երեք աշխատանքային օրվա ընթացքում բացում է նոր հայտ, որը տեսանելի է սովորողի բնակության ԽՀՄ-ին և սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշմամբ սահմանված կարգով սոցիալական դեպք վարելու և սովորողի հաստատություն հաճախելն ապահովելու համար:

2.5. Կիսամյակի ընթացքում 100 -120 ժամ անհարգելի բացակայություն ունեցող (անվճար և վճարովի համակարգում՝ սովորող) ուսանողին տրվում է նկատողություն, 120-150 ժամի դեպքում՝ խիստ նկատողություն, իսկ 150 ժամից ավել անհարգելի բացակայություն ունեցող ուսանողի հետ Քոլեջն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը և ուսանողին հեռացնել Քոլեջից:

2.5.1. Մեկ կիսամյակի ընթացքում ուսանողի հարգելի և անհարգելի բացակայությունների թիվը չի կարող գերազանցել **200** ժամը, որտեղ՝ **50** ժամը հարգելի է:

2.6. Դասերից ուսանողների բացակայությունները համարվում են հարգելի, եթե՝

- Ներկայացվել է բժշկի տեղեկանք
- Տարբեր համագործակցող, շահակից կազմակերպություններից տնօրենին ուղղված նամակ-խնդրանքների հիման վրա
- Ուսանողի ծնողի կողմից քոլեջի տնօրենին ուղղված դիմումի հիման վրա
- Քոլեջում շրջանառվող բացթողման թերթիկների հիման վրա, որը լրացվում է կուրսղեկի կողմից և ստորագրվում է դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից(1-4 օր)

- Օրվա ընթացքում դասաժամերից բացակայությունը՝ քոլեջի բուժքրոջ կողմից ստորագրված բացթողման թերթիկի հիման վրա(հիվանդ լինելու դեպքում)
- Օրվա ընթացքում որևէ դասաժամից բացակայությունը՝ կուրսղեկի թույլտվությամբ, դասավանդող դասախոսի համաձայնությամբ:

2.7.Բացակայությունները հարգելի համարելու արգելքները

- Եթե ուսանողը տվյալ ուսումնական տարվա առաջին կիսամյակում ունի 2.5 կետին համապատասխան կարգապահական տույժ, երկրորդ կիսամյակում բացթողման թերթիկ չի տրամադրվում
- Եթե ուսանողը ընթացիկ կիսամյակում ունի կարգապահական տույժ սույն կարգի 2.5 կետին համապատասխան, ուստի կիսամյակում բացթողման թերթիկ չի տրամադրվում
- Նույն օրը, նույն խմբում հինգ ուսանողից ավել չի թույլատրվում բացակայել բացթողման թերթիկներով՝ բացառությամբ նախազորակոչային կանչերի
- Աշխատող ուսանողների աշխատանքի օրերի բացակայությունները համարվում են անհարգելի և բացթողման թերթիկներ չեն տրամադրվում:

2.8.Եթե ուսանողը մեկ կիսամյակի ընթացքում 150 ժամ անընդմեջ հիվանդության պատճառով բացակայում է դասերից և առկա է համապատասխան փաստաթուղթ, ապա լիազոր մարմնի թույլտվությամբ ուսանողը , մինչև ապաքինումը, կրթությունը կարող է շարունակել հեռավար:

2.9. մեկ շաբաթվա ընթացքում նույն առողջական խնդրով բուժքրոջը 3 անգամ դիմած ուսանողը ուղղորդվում է հիվանդանոց:

2.10.մեկ կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսանողին բացթողման թերթիկներով թույլատրել հարգելի բացակայել 60 ժամ:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի ժ/պ՝ Ք. Հակոբյան